Արձանագրություն N 2

«ՀԱՃ-ԳՀԱՊՁԲ-2019/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «26» հուլիսի 2019թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սարգսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մարգարյան

Ն. Սիմոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Ասատրյան

Օրակարգ

1. **Գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հրավերով հայտ ներկայացրած մասնակիցների մասին**
2. **Գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտի բացումը**
3. **Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասին**

1. Գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հրավերով հայտ ներկայացրած մասնակիցների մասին

1.1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել.

1. «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 1 փող. Էլ. հասցե՝ tendercps@gmail.com
2. «ՖԼԵՇ» ՍՊԸ	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացու 30 Էլ. հասցե՝ flash@flashltd.am

2. Գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտի բացումը

(Հ. Սարգսյան)

2.1 Ընդունել ի գիտություն, որ.

Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի ծրարը պարունակում է՝

- ընթացակարգին մասնակցելու դիմումը,
- հայտարարություն մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին,
- տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին,
- հայտարարություն որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին,
- հայտարարություն առաջարկվող ապրանքների հրավերով նախատեսված բնութագրերին համապատասխանության մասին ,
- գնային առաջարկ՝ ինքնարժեքի, շահույթի և ԱԱՀ-ի հաշվարկով:

2.2: Մասնակցի ներկայացրած փաստաթղթերը կազմված են մեկ բնօրինակից և երկու օրինակ պատճեններից: Բոլոր փաստաթղթերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից:

2.3 Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գնային առաջարկները հետևյալն են՝

/ՀՀ դրամ/

Հ/հ	Ապրանքի անվանումը	«ՖԼԵԾ» ՍՊԸ-ի գնային առաջարկը		**Ընդհանուր գինը /թվերով և տառերով/**
		Գինը՝ առանց ԱԱՀ	ԱԱՀ	
1	Բենզին ռեգուլյար	3 500 000	700 000	4 200 000 (չորս միլիոն երկու հարյուր հազար)

ՀՀ դրամ/

Հ/հ	Ապրանքի անվանումը	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի գնային առաջարկը		**Ընդհանուր գինը /թվերով և տառերով/**
		Գինը՝ առանց ԱԱՀ	ԱԱՀ	
2	Բենզին ռեգուլյար	3 416 666.67	683 333.33	4 100 000 (չորս միլիոն հարյուր հազար)

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. <u>Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասին</u>

(Հ. Սարգսյան)

Որոշվեց՝

3.1 «ՀԱՃ-ԳՀԱՊՁԲ-2019/08» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ին:

3.2 Գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝

1) Կառավարության 2017 թ. Մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով, հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը, մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցում ուղարկել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

2) 1-ին տեղը զբաղեցրած «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ից պահանջել հրավերով և հայտով սահմանված որակավորման հատկանիշները հիմնավորող փաստաթղթերը:

3) «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի վերջնական գնահատումը կատարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությանը հաջորդող աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝	_____	Հ. Սարգսյան
Հանձնաժողովի անդամներ՝	_____	Ն. Մարգարյան
	_____	Ն. Սիմոնյան
Քարտուղար՝	_____	Ս. Ասատրյան